3. *Бакалян П. А., Антонян О. А., Матевосян Р. А., Оганесян Л. Г.* Сб. научн. тр. Ереванск мединститута, 40—43. Ереван, 1988.
4. *Боговский П. А., Роома М. Я.* Вопр. онкологии, *33*, 5, 3—11, 1987.
5. *Джиоев Ф. К.* Вопр. онкологии, *34*, 11, 1369—1374, 1988.
6. *Егиазарян С. В., Арутюнян Р. М., Оганесян Г. Г., Сибатян К. А.* Биолог. ж. Армении, *40*, 11, 953—955, 1987.
7. *Зурабян Н. П., Еолян Э. С., Мидян С. А., Симонян Н. В.* Тез. докл. 5-го съезда Армянского ОГиС им. Н. И. Вавилова, 108—120, 1976.
8. *Кочи Л. А.* В мире науки, *1*, 6—13, 1988.
9. *Миллер А. Б.* Вопр. онкологии, *34*, 2, 131—137, 1988.
10. *Мкртчян Л. Н., Зильфян В. Н., Атанесян С. Г., Акопян Ф. К.* Мат-лы научн. конф. ОНЦ им. В. А. Фанарджяна, 93—96, 1989.
11. *Рубенчик Б. Я., Костюковский Я. Л., Меламед Л. Б.* Профилактика загрязнений пищевых продуктов канцерогенными веществами. Киев, 1983.
12. *Томатис Л.* Вопр. онкологии, *33*, 12, 3—12, 1987.
13. *Фичиджян Б. С., Зильфян В. Н., Кумкумаджян В. А.* Вопр. рентгенологии и онкологии, *11*, 139—141. Ереван, 1981.
14. *Ames B. N., Magaw R., Gold L. S.* Science, *237*, 4799, 271—279, 1987.
15. IARC Sci. Publ. 84, Lyon, 655, 1987.
16. *Lu S., Oshima H., Fu H.* Cancer Res., *46*, 3, 1485—1491, 1986.
17. *Perera F., Boffetta P.* J. N.C.I., *80*, 6, 1282—1291, 1988.
18. *Wagner D., Suker D. K., Bilmazer C. et al.* Cancer Res., *45*, 12, 6519—6522, 1985.
19. *Weisburger J. H., Wynder E. L., Horn C. H.* Cancer Res., *50*, 11, 2541—2549, 1982.

Поступило 20.III.1989 г.

Հայաստանի կենսաբանական հանդես, № 5 (42) 1989. УДК 638.1—638.178.8

ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄՈՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԺԻՇԿ-ԴԵՂԱԳՈՐԾ-ՄԵՂՎԱԼՐՈՒՅՑ ՀԱՅՈՐԴԻ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ ԴԵՂԱՏՈՄԱՍԻՐՈՒՄ

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Երևան

Հոդվածում ներկայացված է մեղրի և մոմի բուժական կիրառությունը միջնադարյան Հայ բժիշկ Ալեքսիանոսի դեղատոմսերում: Տարիների մեր պրպտումների շնորհիվ գտնվել ու օգտագործվել են այդ դեղատոմսերում առաջարկված բույսերը, ծաղիկները, արմատները ու այլ նյութեր, որոնք մեղրի ու մեղրամոմի հետ կիրառելով կյանքում՝ ժողովրդական բժշկության մեջ, ավել են լավ արդյունք:

Приводятся сведения о применении меда и воска в рецептах средневекового врача Алексианоса. Нами найдены рекомендуемые в этих рецептах растения и компоненты, которые в сочетании с медом и воском использовались в народе и давали хорошие результаты.

The medicinal use of honey and wax in prescriptions of the medieval Armenian physician Alekstanos has been stated on the basis of manuscripts. By means of long investigations the plants, flowers, roots and other substances, suggested in these prescriptions have been found, which are used with honey and wax in life, giving a good result in folk medicine.

Միջնադարյան դեղատոմսեր-մեղր-մոմ:

Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկության մեջ որպես դեղամիջոց երբեմն առանձին, երբեմն էլ այլ նյութերի հետ իբրև դեղատոմսերի բաղադրություն օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի արտադրանքը՝ մեղրն ու մեղրամոմը, հաճախ էլ՝ մեղվաթույները: Ինչպես վկայում են գրիչները ու ժողովրդական բժիշկները, այն միշտ էլ բարելավել է հիվանդի վիճակը:

Այս տեսակետից առանձնակի արժեք է ներկայացնում Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված № 8185 ձեռագիրը, որը XVI դարով թվագրվող ժողվածու է: Վերջինիս մի բաժինը բժշկարան է՝ գրված միջնադարի նշանավոր բժիշկ Ալեքսանդրոսի ձեռքով: Բժշկարանը բաղկացած է եղել 80 գլխից, որոնք ունեն ենթաբաժիններ, վերջին երեք գլուխները մեզ չեն հասել:

Ձեռագիրը տեղեկացնում է, որ Ալեքսանդրոսը ապրել և գործել է Շամբրաձորի շրջանում, նա բազմաթիվ է եղել այդ վայրերին՝ Շամբորաձորով հոսող Ջարեր գետին ու գետափին փռված Գառնակեր գյուղին, շրջանի տեղանքին, բուսական ու կենդանական աշխարհին, երկար տարիներ զբաղվել է մեղվապահությամբ, որը երևում է մեղվի խնամքի գործում նրա ունեցած հմտությունից: Լավատեղյակ է եղել ժողովրդական բժշկությանն ու անասնարուժությանը, պարապել է նաև կաշեղեբծությամբ և այլ բոլոր բնագավառներում իր կուտակած փորձն ու գիտելիքները խնամքով շարադրել է: Որպես հավատուրն այն ամենի իսկության ինչ գրում է ինքը, շեշտում է թե՝ «ես մեղատոր Ալեքսանդրոս աչօք տեսեալ եմ և արարեալ. ոչէն գիտակ է, որ սուտ չէ» (էջ 85 ա):

Բժշկարանը դեղաբանական մի անսպառ երկ է, որտեղ դեղատոմսեր են առաջարկվում ներշին, նյարդային, վիրաբուժական, մաշկային, կանացի և այլ հիվանդությունների բուժման համար, որոնց մեծ մասի բաղադրության մեջ մոմն ու մեղրը դրվում են կարևոր տեղ: Ինչպես երևում է Ալեքսանդրոսի բժշկարանի բովանդակությունից և տարբեր տոհմերով որած ուղղակի ու անուղղակի ակնարկներից, նա իր բժշկական գործունեության ընթացքում ոչ միայն բազմաթիվ է եղել միջնադարյան Հայաստանի բժշկապետների ուշադրությունները, ոչ միայն մասնակցել է ժողովրդական բժշկության հմտություններին, այլև որոշ բաներ ավելացրել է սեփական փորձից: Ուստի, սույն բժշկարանի ոչ միայն գրիչը, այլ նաև հեղինակն է Ալեքսանդրոս բժիշկը: Այդ ամենի հիման վրա էլ նա ներկայացնում է իր դեղատոմսերը և դրանով բուժելու եղանակները, որոնցից կանդրադառնանք միայն նրանց, որոնք կապվում են մեղվի արտադրանքի հետ:

Այսպես, աչքաբորի և աչքի լույսը նվազելու դեպքում «վասն աչաց ցաւի» գլխում ասում է՝ «զկաքաւի լեղին հում մեղրով աչքն դիր, որ է՝ կաքավի լեղին և հում մեղրը խառնի իրար, շաղախի և օրը մի քանի անգամ կաթեցրու աչքի մեջ: Իսկ երբ աչքի վրա սպիտակ հատիկ է առաջանում, այն մաքրելու համար առաջարկում է. «առ մեռելի ոսկր, մեղու չորացուցած, և պիծկի հունդ, զամենն համասար ծէծէ և մաղն և քիչ մի պղպ շարար այ լից և սգկէ և դեղդրով աչքն դիր» (էջ 17 ա):

«Աչք, որ շաղ ունի, բոշու կամ հորդու լեղին ձագուց մեղրով ի վերա դիր»: «Աչք, որ կոպն թանձրանա և կարմրի, փորր մանկան մէջն ի հում մեղրն խառնէ և դիր»:

Եթե աչքի կոպն արնակալած է, առաջարկում է՝ «անուշադրն (նաշադիր) մեղրով հալէ և պարզէ՝ վազէն և երիկունն աչքն դիր» (էջ 18 ա):

Եթե աչքի կոպերի մազերը՝ թարթիչները թափվում են, ապա այդտեղ մազ ծլեցնելու համար առաջարկում է՝ «այծի կաստոր և մկան ծիրան ազա և մազէ, մեղրով շաղախել և ած ի կոպն, մազ բուսանի» (էջ 19 ա)։

Աչքի վրա բռնված սպիտակ փառն անցկացնելու համար հանձնարարում է՝ «առ խամ մեղրը և խոիդանի ծաղիկ և լից ի հատա եղեգ մի զմեղրն և զծաղիկն և զեղեգին բերանն և զբոլորն շաղկէ հացով. և թաղէ ի մազ մազ, որ եփի, եղմն, և հան ի Ազատած և պահէ, երբ որ պիտենա, ի բան տուր, խիստ լավ է» (էջ 19 բ)։

Աչքի լույսը պակասելու դեպքում առաջարկում է՝ «առ մին գրգալ մեղր հում խ (քառասուն) հատ պղպեղ և է (հինգ) հատ զղատոր անծակ, պատառ մի դմակ, խառնէ և դինով եփէ, որ և (հինգ) մին մնա. և աչքն դիր լուսնա ատուծով։ Եվ կամ՝ «առ լընձո լեղին, հում մեղրն խառնէ և զեղդրով աչքն քաշէ, զլոյսն յորդորէ։ Եւ գրած է թէ այս լեղիս և ապանու լեղին քաղցր համ է» (էջ 94 բ—95 ա)։

Այնուհետև, «Վասն ականջացաւի» գլխում տալիս է հետևյալ խորհուրդները։ Ականջացավի և ականջում խոց ունենալու ժամանակ՝ «առ սպանդ և ծէծէ, ծծկեր տղայի զողով եփէ և ի ներս կաթեցս, պատրոյր արա, ի մեղրն թաթախէ և ի տապրն և յականջն դիր» (էջ 96 ա)։

Եթե ականջն ցավում է և թարախ է գալիս, «առ անձարուի գ (չորս) դրամ, տապր բ (երկու) դրամ, շիպ ա (մեկ) դրամ ու կէս, մանգատ բ (երկու) դրամ, մեղր ժ (տասն) դրամ, քացախ ը (ութ) դրամ, ծեծելոյն ծէծէ և հալելոյն հալէ, լիրար խառնէ. լաւ մաղելամ արա և ականջին դիր, որբէ զթարախն և հանէ դուռանս։ Իսկ եթե ականջից հոտ է գալիս և որդ կա ներսը, «զկատավասի ձեթն ի ներս կաթեցս և լեղի մեղրով դիր» (էջ 22 բ—23 ա)։

«Վասն բիթին որ արիւն երթա» գլխում հանձնարարում է՝ բիթից ու բերանից արյան հոսքը դադարեցնելու և սրտի ցավի դեպքում «առ ժ (տասն) ընկույզ և ափ մի կնդրուկ և խունկ ի մեկ տեղ ազա և մեղրով կէր անօթեց գ (երեք) օր» (էջ 23 ա)։ «Վասն որ երեսն ուռած լինի» գլխում երեսի ուռածն իջեցնելու և երեսի գույնը գեղեցկացնելու համար առաջարկում է՝ «առ զլոշին տերևն, ծէծէ, զջուրն ի մեղրն և ի դինին խառնէ և խմէ»։ Մեկ այլ դեղատոմս՝ «մեղր և շաքար և կոմու կարագ լիրար խառնէ և խմէ» (էջ 27 ա)։

Իսկ «որ սիրան և կուշտն ցաւի, գանանուխն եփէ ջրով, և ի ձագուց մեղրն քամէ և խմէ գ (երեք) օր» (էջ 27 ա—27 բ)։

«Դեղ սրտին դարձուցանելու» գլխում սրտխառնոցի ժամանակ և սիրտն թափելու դեմ խորհուրդ է տալիս՝ «առ ասորեակ և բոզկի սերմն զդ (երեքերեք) դրամ, լոսէ և մեղրով տուր անօթեց, զրլդամն ի վեր բերէ։ Այլ դեղ որ զսև մազն ի վեր բերէ, առ հալիլա և զխիարի ջուրն քամէ, նուշ կէս դրամ, մանանեխ գոնկ ու կէս, ազա և մազէ և մեղրով խառնէ, և տուր որ խմէ» (էջ 27 բ)։ Եվ կամ այս նույն նպատակով այլ դեղ մազձի՝ «քացախն և մեղրն լիրար խառնէ, սև բոզկն կտորէ և ի ներս ձգէ թող որ կենա մինչև յառավոտան և յորժամ արևն բարձրանա առ և կեր առանց հացի և ի վերա տուր ջուր խմէ, թէ ինչն մատած որ դաս» (էջ 97 բ—98 ա)։ Այս, ինչպես նաև հաջորդ՝ «Վասն բրլդամի» դեղատոմսը փաստորեն հանձնարարում է լյարդի բուժման, այսինքն՝ մազձը մաքրելու համար, այսպես՝ «առ զբարդի ծառի կեղևն և զթիթի ծառի տակն միաչափ չորացս և մանր ազա, մեղր խառնէ և կեր, սրբէ զբլդամն։ Մեկ ուրիշ դեղատոմս՝ «հում մեղր և սպիտակ սոխ և սև բոզկ լիրար խառնէ և կեր. զբլդամն սրբէ և զխոսքն պարդէ», և կամ «Վասն

մաղասիս» խորհուրդը՝ «քաղկն խորովէ և կեր, զսոխի ջուրն հան մեղրով և բիլն արկ»։ Այս գեղամիջոցները քան էությանն դողերոցքի բուժման համար են։ Իսկ հաղի դեմ առաջարկում է՝ «աղ և մեղր խառնէ և տուր անօթեց» (էջ 29 ա)։

Փորահարիքը (երբ որովայնը ցավում է և արյուն է լուծում) հանձնարարում է բուժել հետևյալ կերպ՝ «առ խաս մեղր և սև ձոյթ, վայրի դաղձն և մարդու մաղ, կամ այծու և սխտորի ջուր, գձոյթն, զմեղրն և զդաղձն ի մեկ եփէ, որ աղտա լինի, և զմաղն այրէ, ի ներս ձգէ և սխտորի ջրովն շաղախէ, ամոլ ադեկ և պատրուգ արա և վերս փորից օծէ»։ Փորացավի դեմ՝ «զսէրկէ-ւիլն խորել և մեղրով տուր ուտէ, զմիտքն բանա, և զփորն կապէ կամ՝ «որ արիւն երիայ, առ զհիւնի կորիզն և աղանձէ, աղա և մաղէ ճերմակ՝ հում մեղր խառնէ և տուր ուտէ անօթեց երեք օր» (էջ 31 ա—31 բ)։

Ուշագրավ է, որ անհույս հիվանդի համար այնպիսի դեղ է առաջարկում, որից կարող է պարզվել նա կապրի, թե ոչ. այսպես՝ «Վասն լիրդացաւի զբ-խում»՝ «լերդն, որ ի հովու թեջ լինի ցաւն, պիտի որ գիտենաս եթե մահու է թէ ոչ, առ մեղր և քացախ լիրար խառնէ և ի վերա նշտին ած, թէ ցամաքի և չորանա, դու այն հիւանդին դեղ արա զոր գիտես, ապա թէ դալար մնա այն հիւանդն մահու էս (էջ 36 բ)։

Փայծաղի հիվանդությունը կարելի է բուժել հետևյալ կերպ՝ «զեղան կոտոշն խարանա և մեղրով տուր որ ուտէ, կամ՝ «զգաւրս-խոտն ադա և մեղրով տուր որ խմէ, ոգտէ աստուծով» (էջ 33 ա)։

«Վասն ցանկութենէ» գլխում առաջարկում է նույնիսկ սեռական թուլության դեղատոմս՝ «առ գգիսյ ծառոյ, պտուղն, որ տաճիկն արտուճ ադամի ասէ, ծէծէ և խառնէ ի մեղրն և տուր որ ուտէ, զսև բլղամն կարէ և զմենջն ամրացնէ, կամ թէ՝ «զգուռշու կաթն տաքցոյ և մեղրն խառնէ և անօթեց կեր զ (երեք) օր և թէ մարդ գլուխն շարժի՝ այլ այս գեղն արա խիստ օգուտ է» (էջ 39 բ)։ Ինչպես նաև՝ «Երբ առ կինն յերթա թափի սերմն, առ սէրնխիշդ դարեսէնի որ է տարիչիմի, օշոխ, ոպանդ քիրա և (հինդ)-ն (հինգ) դրամ, աղա և մաղէ, և խաս մեղրով մոռ արա և տուր առուրն զ (երեք) դրամ, մարդն զօրանա և կարիչ դառնաս» (էջ 39 բ—40 ա)։

Մարդու պարան ընկնելիս, երբ այն ցավում է, առաջարկում է՝ «դրոդկին հունդն և դչարաշոտն ծէծէ պարապուր և մեղրով տուր ուտես» (էջ 40 ա)։

Դյուրամիզությանն դեպքում, այսինքն՝ «որ սպիտակ զոզն, մեղրն և բացախն լիրար խառնէ խմէ տուր» (էջ 42 բ)։

Թացի վերը նշված խմվող գեղերից, Ալեքսիանոսը առաջարկում է նաև վերքեր բուժող քսուկներ՝ մանրամասներ «Վասն չոր հերբ ունի» խորագրի տակ տալիս է բոր ու բոսր բուժելու միջոցները՝ «առ սպիտակ մոմ, սև հաւու ճրագու, շիրիկ ձէթ, լիրար խառնէ և բոլ գվերրն, և լիրակ ի բազանիս երթա, տաք ջրով ծփէ ու մանուշակի ձիթով։ Ջհնարքանն մոմ դարկ, մինչ արիւն մնի, աղա զկայծակն մանր լոսէ, և ի վերա ցանէ, երեք օր ի նորն լուանին և երեք օրն ի փուլն» (էջ 60 ա—60 բ)։

Բորոտությունն բուժելու համար «Վասն պիտակի» վերնագրի տակ առում է՝ «ամենայն պիտակի դեղ գոյս արա, առ գիսանդարիտոն, որ է ոսկէ բդեղն այն որ ոմանք եղն ասին, մանր ադա, բնդ մոմ և բնդ ձեթ խառնէ, բացախով լարա և ի վերա դիր զփոռոնն հանէ, ապինքն դմորթն հանէ, զդեղն ի վեր առ ասուր ար և ի վերա ցանէ, լաւանա աստուծով» (էջ 63 բ)։ «Այլ առ դեղին և սպիտակ ծծումն ադա ձիթով և մեղրով քացախով դիր» (էջ 64 բ)։

«Վասն խոցի» գլխում մարմնի խոցերն ու վերքերը բուժելու համար

Այնքսիանոսը խորհուրդ է տալիս՝ «առ ձերմակ ձուի, որ է շամասիզի և խամ մոմ. և ոչխարի երիկամանց ճրագուն. որ ի յանուն Մուրը աստվածածնին զենալ լինի ոչխարն. Աստվածածնի ի տոնին մատաղ առնեն, և գիրհանրդ ի մի տեղ հալէ և բեր հին կտաւ-քաթան և ձգէ ի հալած դեղտ որ տար տաքէ և թաթխէ լաթին. թող ափի չափ լինի և այնպես դիր ի վերա խոցին. որ չայրի խոցն և փոխ առ փոխ դիր ի վերա։ Կամ՝ «առ գնուիճն չորացո և մանր ագա մեղրով շաղախէ և դիր ի վերա խոցին. մաքրէ և առողջ առնէ» (էջ 65 բ)։ Ինչպես նաև՝ «մանանեխն հում մեղրով դիր. «կտավատն մեղրով դիր։ Այլ դեղ՝ «Ջկայծուկ փշին տակն ագա և զվէրն մեղրով օծ և ի վերա ցանէ։ Թէ խոցն չպատռի դաղավնո ծիրտն և զկտաւատն մեղրով ի վերա դիր» (էջ 66 ա)։

Թարախային խոցեր բուժելու և ցավազրկելու համար առաջարկում է՝ «ոչոշան ծաղկին տակն չորացո և մանրէ և մեղրով օծ հ։ զորտեղ ի դեշ ցան կերել է. զեղինջն չորացո և մանր լոսէ իրրև փոշի. զգանն մեղրով ած. և ի վերա ցանէ լաւանա աստուծով»։

Հանձնարարում է լավ մահլամներ տարատեսակ վերքերի բուժման համար՝ «անկլիր. խալամի ժանգոտ. մուրտասանք. մաղտալէ։ Խունկ ե. և (հինգ-հինգ) դրամ. այսոց պար ա պար մոմ։ Զմոմն հալ է և բան զմոմն. բ (երկու) պաղի ձեթ ի վերա լից և խառնէ եփէ և դիր ի վայր. որ քիչ մի պաղի. որ մաղ չայրէ. և ապա զդեղերն լից և խառնէ զխոցին. փութն կու հանէ և լաւացնէ»։

Առաջարկում է տաք խոցեր հովացնող և կրակով այրված վերքեր բուժող մահլամ՝ «առ ուպն ծէծէ և զկեղեն փչէ և եփէ. որ դերդ լանդակ դառնա և ապա առ սիլիկոն ժ (տաս) դրամ. անձարութ դ (չորս) դրամ. լիրար խառնէ, և զարկ և դիր ի վերա խոցին» (էջ 67 բ—68 ա)։

Սնկային վերքեր բուժելու համար հանձնարարում է՝ «առ տորոն. մուրտասանի. ե. և (հինգ-հինգ) դրամ. վարդի ձիթով եփէ. ա(մեկ) դրամ մոմ ի ներս ձգէ. թէ ի դուրս լինի. բամբակով ի վերա դիր և թէ ի ներսէ. պատրուգով դիր»։

Վերքեր բուժելու համար ունի նաև քսուկներ,որոնց կոչում է «բաղդադու մահլամներ». այսպես՝ «առ սպիտակ մոմ. և սև այծու երիկամաց ճրագու, ոճրաղուն և զմոմն հալէ և բարակ ուրսոլի սապոն. հաւի ծվա (ձու) ի ներս մանրէ եփէ և վեր առ պատուական մահլամ» (էջ 68 ա—68 բ)։

Այրվածքների բուժման համար առաջարկում է մահլամ՝ «առ գնուան կեղեն եփէ և ջուրն ի գինին լից. և քիչ մի կտաւատի ձէթ լից ի վերա նոան կեղեին և ձեռքդ հար որ հալի և բեր երկու ձվի դեղնուց եփած ի ներս ձգէ, և քիչ մի խամ մոմ հալէ. ի վերա ած. զամէնն դիր ի հաւանգն և ծէծէ և դիր ի վերա դդ (երեք-չորս) հատ. լաւանա Աստուծով»։ Մրսածի համար առաջարկում է՝ «մեղրով օծ և զիտորն մանր ագա և ի վերա ցանէ» (էջ 69 ա—69 բ)։

Որոշ դեղ ու ճար էլ հանձնարարում է կանանց հիվանդությունների բուժման համար։ Այսպես, տղոցկան կնոջ փորը ցավելիս. խորհուրդ է տրվում՝ «զլուշտակն եփէ. զջուրն մեղրով խմել տուր արբէ ցավն» (էջ 78 ա)։

Նրը տղոցկան կնոջ կաթն ցամաքում է. «կին. որ կաթն ցամաքիս դրելիսում կաթը հորդելու համար առաջարկում է՝ «զամիթն եփէ և զջուրն խմէ, դաշտրայն. զսիսեռն. և զրակլայն մեղրով եփէ և խմէ. և յորդէ զկաթնս։ Մեկ այլ դեղ կաթի ավելացման համար՝ «հին գինի և հում մեղր և դարընդան ալիր եռացո և տուր. որ ուտէ. օգնէ» (էջ 78 բ)։

Բերանի խոռոչի զանազան հիվանդությունների՝ լեղվի. լնդերի. ատամ-

ների ջրավի, ինչպես նաև ատամների շարժվելու դեպքում, խորհուրդ է տալիս՝ «եւ թէ լեղուն և լինդքն փլոր եալ լինի. և կամ ատամունք ի վայր գա, առ գլօշիտակի տերև և եփէ ջրով. քամէ զջուրն և մեղր խառնէ, և է (լոթ) օր խմել ասուր, տակն ծէծէ և սպեղանիք արա և ի դուրս դէհն դիր. ողջանա աստուծով» (էջ 96 բ—97 ա)։

Շատ ուշագրավ է նաև այն, որ Ալեքսիանոս բժիշկն այն դեղատեսակների մասին, որոնք վերցրել է ուրիշներից, բայց ինքը դեռևս չի փորձարկել, ուղղամտորեն գրում է՝ «որդիէակ իմ, ես այսոր հաֆն ու նահաֆն իմանալ չկարացի. թէ սղալ բան երևա, անմեղադիր լերուք, օրինակն այսպես էր գրած» (էջ 75)։

Ալեքսիանոսն այս ամենից բացի, ուշագրավ խորհուրդներ է տալիս նաև հիվանդությունների դեմ կանխարգելիչ միջոցներ կիրառելու վերաբերյալ։ Այսպես՝ «վասն մարդուն ինչն առողջ կու պահէ» խորագրի տակ խոսում է այն մասին, թե մարդն ինչպես հետևի իրեն, որ չհիվանդանա։ Ահա մեկ օրինակ՝ «ամառային եղանակին ով որ ամենայն այդ անօթեց, զ(երեք) պատտուանհալ մեղր ուտէ, անտհ լինի ամենայն ցաւոց» (էջ 51 բ)։

«Ահա որդեակ իմ,— ավարտում է իր խրատները նա,— այս է. որ մի բան միոջէ գրեցի պարզ և յիստակ բանիւ։ Եւ այն. որ մնաց, իմաստուն մարդու հարց և ուսիր. և գմեղաւոր Ալեքսիանոս յիշեա ի տէրս։

Մենք վերը նշված գրքի բոլոր դեղատեսակներն ու դեղերը խստագույնս հետևողականությամբ օգտագործել ենք և բոլորն էլ ավել են կգալի արդյունք։

Այդ են վկայում նաև բազմաթիվ մասնագետներ։ Հաղիվ թե որևէ հիվանդության կամ վերքի ինչ-որ չափով չօգնի մեղվի արտադրանքը։ Տասնյակ տարիների մեր դիտումներն ու այդ արժեքների ժողովրդական բժշկության մեջ կիրառելու փորձերը ավել են լավ արդյունք, որոնք այսօր էլ համարձակ օգտագործում ենք որպես լավագույն դեղամիջոցներ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Մատենադարան, ձեռ. № 8185։

Ստացված է 1. III. 1989.

Биолог. ж. Армении, № 5 (42) 1989 УДК 615.89

ДИКОРАСТУЩИЕ ПИЩЕВЫЕ РАСТЕНИЯ АРМЕНИИ В НАРОДНОЙ МЕДИЦИНЕ

И. С. МЕЛКУМЯН

Институт ботаники АН АрмССР. Ер[illegible]

Показано применение более чем 40 видов растений дикорастущей флоры Араратской котловины в народной медицине. Некоторые из приведенных сведений заслуживают углубленного изучения, в особенности касающихся таких растений, которые применяются при лечении гипертонии, сахарного диабета, импотенции и др.

Ցույց է տրված Արարատյան գոգավորության վայրի ֆլորայի ավելի քան 40 տեսակ բույսերի կիրառությունը ժողովրդական բժշկության մեջ։ Ներկայացված տեղեկությունների մի մասն արժանի է խոր ուսումնասիրության։ Հատկապես այնպիսի հիվանդությունների դեմ, ինչպիսիք են՝ հիպերտոնիան, շաքարային դիաբետը, իմպոտենցիան և այլն։